ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«18» մայիսի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Այսօր Թանգարանների միջազգային օրն է

Ստեփանավանի Ստեփան Շահումյանի և Սահակ Սահակյանի թանգարանների հարգելի աշխատակիցներ, սիրով շնորհավորում եմ ձեզ Թանգարանների միջազգային օրվա առթիվ:

Ուրախությամբ պետք է արձանագրենք, որ պատմամշակութային այս կառույցները ոչ միայն կարողանում են լավագույնս ներկայացնել մեր սիրելի քաղաքը, այլև ինքնատիպ կամուրջ են հանդիսանում պատմությունը պահպանելու, անցյալը ներկա սերունդներին փոխանցելու գործում:

Թանգարանների հարգարժան աշխատակիցներ, շարունակեք պահպանել ու հաջողությամբ ներկայացնել մեր պատմությունն ու կենցաղը, մշակութային կյանքը:

Մաղթում եմ ձեզ անսպառ եռանդ, ստեղծագործական վերելքներ, թանգարանների մուտքերի մոտ չպակասող հերթեր ու նորանոր ձեռքբերումներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ